

Կ Ի Լ Ի Կ Ի Ա

Ա.

*Աշխարհագրական դիրք. — Հիմ եւ մոր Կիլիկիա. —
Բնակչական կազմութիւնը. — Լեռնային խարքեր. —
Կրօն. — Վ. Լամկրուսայի տպաւորութիւնը:*

Կիլիկիայի վրայ ամեն կողմէ սեւեռւած ուշադրութիւնը հետաքրքրական է: Ազգային և Եւրոպացի հետազօտողներ հիացումով դիտած են և կ'դիտեն այդ երկրին անցեալ վառքերն ու արդի աւերակները: Թէ գիտական և թէ ժողովրդական աշխատութիւններ, լրագրական յօդուածներ ծանօթացուցին Կիլիկիան:

Ես կ'փութամ, սրչափ կարելի է, Ֆրնդհանուր տեսութիւններով ծանօթացնել Կիլիկիան «ԼՈՒՄԱՅ»-ի ընթերցողներուն:

Կիլիկիա երկրազնդի այն գծերէն է, և թերեւ ըստ ինքեան միակ գիծը, որու վրայ դարեր իրարու հետքերը քնջելու համար ամենէն հետաքրքրական երևոյթներ յառաջ բերած են:

Միջերկրականի հիւսիսային եզերքը դէպի Արևելք՝ Եփրատ, երկայնութեան 29° էն 35° (փոփոխուն) և լայնութեան 36° էն 38° աստիճաններուն վրայ (հաստատուն) կ'դաշտանայ և կ'լեռնանայ երկիր մը. այն տեղ ծովեզերքը Ցարսոնի շրջականերէն մինչև Ամանոսի քղանցքը ան-

ծիր դաշտ մ'է կարծես բլրակներով հազիւ խորտ ու փորտուած. իսկ այս ընդարձակութեան վրայ տիրող անտառուտ և ձիւնապսակ լեռներու այն հսկայ դօտին՝ Ցաւրոսը, որ պատմական նշանաւոր դէպքերու կռուան ընծայած է, ցլային նիստով մը կ'երկնայ մինչև Պարսկաստան: Այս է պատճառն որ այդ երկիրն սկիզբէն ի վեր նկարագրուած է *Դաշտային Կիլիկիա* և *Ապառաժ Կիլիկիա* կամ *Գահ Կիլիկիոյ* անուններով:

Կիլիկիան երկու գլխաւոր դիմայեղումի (phase) մէջ կարելի է նկատել պատմականապէս.

1. *Հին Կիլիկիա*. — Կիլիկիա իբր ծովեզրեայ երկիր մը՝ ծանօթ հին աշխարհի քաղաքակրթութեան նշանաւորներուն հետ շփուեցաւ: Ասորեստան, Պարսկաստան, Եգիպտոս, Հռոմ կ'մրցէին զայն գրաւելու համար: Ամենէն փայլուն ժամանակամիջոցն է Աղէքսանդրեան տիրապետութիւնը. հելլենականութիւնը ոչ միայն ծաղկեցաւ Կիլիկիայում Աթէնքի և Աղէքսանդրիայի հետ մրցելու չափ զարգացած կեդրոններով, այլ մանաւանդ Կիլիկիայի լեռնադուռները կամ կապանները մուտք տուին հելլենականութեան դէպի Արևելք յառաջանալու: Իոսսի ճակատամարտը Ամանոսեան կիրճերում՝ այդ պատմական նշանաւոր դէպքին՝ թուականն է (ն. Ք. 333 Նոյ. 29):

Թէ Սելևկեան իշխանութեան ժամանակ և թէ յետոյ հռոմէական տիրապետութեան ժամանակ ալ Կիլիկիայի մտաւոր բարգաւաճումը մնաց իւր նախնաձեւի վիճակին մէջ, այնպէս որ Ցարսոն՝ Կիլիկիայի Աթէնքը՝ հռոմէական ազատ քաղաքացիութեան իրաւունքով օժտուեցաւ:

Ասոնց ամենուն վրայ կանխել պէտք է տալ այն ընդարձակ պետութեան քաղաքակրթութիւնը, որ անշուշտ մեծ դեր ունեցաւ Կիլիկիայի հին կեանքին մէջ: Քեստական քաղաքակրթութիւնն է այդ, որ նորագոյն պեղումներով դուրս կուգայ հողաբլուրներու տակէն: Հայոց լեռան (Կես-

վոր տաղը կամ ծէպէլի պէրէքէթ) արեւելեան քղանցքը, լաւ եւ Գեափուր եւ Քիւրտ լեռներու մէջ հարաւէն հիւսիս հովիտ մը կ'պարզուի վատառողջ, հազիւ մշակելի եղած այժմ չէրքէզներու ջանքով. քետացիներու ծաղկած երկիրներէն մին էր այդ, որու քաղաքակրթական գրաւականները ծածկուած են Բէլլէր գիւղի մօտ Ջէնճիրլի անուն տեղը, հողաբլուր մը. եւ դեռ ո՞ գիտէ ինչ հողաբլուրներ: Ջէնճիրլիի պեղումը, որուն լայն խրամները ես անձամբ տեսայ 1893-ին, ընտիր հարթաքանդակներ ի լոյս հանած է: Քետական հնութիւններ գտնուեցաւ նաև Գիլիկիայի զանազան կէտերում, Մարաշի մէջ եւ Մարաշի ու Այնթապի շրջակայ գիւղերու մօտերը, որք կ'ցուցնեն թէ ինչչափ ծաւալուն եղած է Գիլիկիայի ամենէն հին կեանքը ¹⁾:

2. Նոր Գիլիկիա. — Մեր պատմութեան համար Գիլիկիայի հետաքրքրական ժամանակամիջոցը կ'բացուի մետասաներորդ դարու ճիշդ կիսուն, երբ արդէն Գիլիկիա մնացած հին քաղաքակրթութեան աւերակներու ներքև ալ Բիւղանդական կայսրութեան բաղդին կապուած՝ օտար տարրերու կեդրոն մը կ'դառնար:

Հայոց մուտքը Տաւրոսի անմատչելի ամուրներու մէջ՝ Գիլիկիայի պատմութեան համար նոր նոր եւ կարևոր դէպքեր ստեղծեց. չին Գիլիկիա մեր վերը նշանակածէն աւելի ամփոփ աշխարհագրական աստիճաններու վրայ բաղաքակրթիչ մղումով մը կ'զարգանար, թէև լեռնցիներ — թէ՛ Տաւրոսի եւ թէ՛ Ամանոսի վրայ իրենց նկարագրին հաւատարիմ կ'մնային դաշտեցիներու յառաջդիմութեան

¹⁾ Քետացիներու վրայ ուսումնասիրութիւն մը հրատարակեց A. H. Sayse զոր Joachim Menant ֆրանսացի ախպետականը ֆրանսերէնի թարգմանել տուաւ իւր կողմէն կցելով *Բառաջարան մը եւ Բառեդրան մը*. Les Hétéens Histoire d'un Empire oublié. Paris, Ernest Lerout Editeur 1891.

հանդէպ: Նոր Գիրիկիա աւելի սահմաններ ընդարձակեց նախ դէպ ի Արեմուտք և յետոյ դէպ ի Արեւելք՝ Եփրատ, ընդգրկելով եփրատացիներն ալ, ինչպէս այժմ:

Նոր Գիրիկիան շունչ չառաւ տեաւան տիրապետութեան մը ներքե կամ շատ զօրաւոր տարրի մ'ազդեցութիւնով որ կարենար հինին չափ հռչակ հանել քաղաքակրթութեան տեսալէտով: Բայց և այնպէս յատուկ նկարագիր մ'ունի նոր Գիրիկիան այժմ կեդրոն մը ներքին և արտաքին կռիւներու. կռիւներ՝ որոց մէջ բարձրացաւ հարստութիւն մը և կրցաւ երկար ժամանակ փայլիլ աստղի մը պէս շողշողուն յատուկ դրութեան մը պայմաններով:

Հին Գիրիկիայի բնակչութիւնը խառնակ չէ եղած այնչափ՝ որչափ նորինը: Տիրող պետութիւններ անշուշտ իրենց գաղութները հաստատեցին հին Գիրիկիայի մէջ. բայց միայն գաղութ: Ասոնց ամենէն զօրաւորն եղաւ հելլենականը. արդի յոյները (ռում) Գիրիկիայի ծովեզերքին վրայ հազիւ կրնան յիշեցնել ոչ թէ հելլենականը՝ հինը, այլ՝ բիւզանդական տիրապետութեան ամենէն յետին մնացորդը:

Հետզհետէ Գիրիկիայի տարբեր ազգերէ գաղթական — բնակիչները տեղական պայմաններու մէջ իրենց նկարագիրները այլասեռեցին. ասոնց իրարու հետ շփումը տարբեր բարբ մը պիտի ստեղծէր, և նոր Գիրիկիայի բարացուցականն է այդ, Երկիրը գրաւելու դիտումով յարձակողներ կամ ասպատակողներ ոչ թէ զիրար վռնտեցին, ինչպէս յառաջ, այլ՝ խտացան զանազան կեդրոններում. այսպէս յառաջ եկաւ բազմատարր բնակչութիւն մը:

Մետասաներորդ դարուն մէջ Արեմուտք և Արեւելք իրենց բոլոր ուժով Փոքր-Ասիայի բազդը կ'վճռէին. Գիրիկիա իբր մէկ մասն այդ երկրին միկնոյն վիճակի մէջ կ'գտնուէր: Մառակիւնոսներու, եգիպտացիներու, յոյներու

կռիւներուն կեդրոն էր դարձել Գիլիկիան, երբ հայերն ու թիւրքմէններ ոտք կ'դնէին Տաւրոսի բարձունքներու վրայ: Դէպ ի Փոքր-Ասիա Լանկ-թեմուրեան արշաւանքներու հետեանքով թաթարներուն մուտքն Գիլիկիա՝ հազիւ կարելի է օտար հոսանքներու վերջ նկատել միջին դարում: Ասիական բարձրաւանդակի գրեթէ բոլոր պատերազմիկ, լաւ ևս, աւագակ, թափառիկ, հովիւ ժողովուրդներն ու ազգերը և Ներսիսի թէ իւր բիւզանդականութիւնով և թէ խաչակիր բանակներով բնակչական տարօրինակութիւն մը բերին այդ երկրին, որու տնտեսական և մտաւորական զարգացումը շատ բնական համեմատութիւն մը պիտի պահէր այդ տարբեր ազգերու բնիկ նկարագիրներուն հետ. ոչ միայն իւրաքանչիւր ցեղ կամ ժողովուրդ իրենց բարբերը չպիտի փոխէին արմատապէս, այլ մանաւանդ ծովեզերքն ու լեռները պիտի պահէին իրենց բնականութիւնը մտքերու և բարբերու վրայ ալ: Գիլիկիայի ամենէն վերջին օտար տարրն եղաւ չէրքեզներ, որ 1864-ին սփռեցան օսմանեան հողի զանազան կէտերուն վրայ:

Այժմ Գիլիկիա ունի հայ, յոյն, հրեայ, թուրք, թիւրքմէն, քիւրտ, արաբ (թէ մսլիման և թէ նուսսարի կամ նսայիրի ըսուած), չէրքեզ, բոշայ (չինկեանէ) և այլն ազգերէ խառնուող մը. ասոնց վրայ պէտք է աւելցնել ֆիրենցիներ (փրանկ՝ այսինքն Ներսիսի) մանաւանդ ամերիկացիներ (միսիօնարներ), որ ոչ թէ իբր տեղացի, այլ տեղին մէջ իբր ծանրակշիռ դեր և դիրք ունեցող ոյժ մը:

Արդի Գիլիկիայում տիրող տարրը ոչքրիստոնեայն կամ թիւրքը կ'նկատուի. բայց տարբեր և սակայն իրական տեսութեամբ մը քրիստոնեայ տարրը կամ հայն է Գիլիկիայի նշանակութիւն տուողը:

Այդ զանազան տոհմերու մէջ իրենց ցեղաբաժանում-

ներով հետաքրքրական են թիւրքմէնները, որ 20—22 ցեղ (tribu) կը հաշուուին, որոնց նշանաւորները մինչև վերջին տարիներ անմատչելի ըրին Տաւրոսը օսմանեան տիրապետութեան: Ասոնք ոչ միայն կռուող են իրենց անկախութեան համար, այլ մանաւանդ իրարու հետ:— Ասոնցմէ սա ցեղեր շատ նշանաւոր եղան. *Րամազան* կամ *Րամատան* օղլու, որ հայ թագաւորներու դէմ կըռուեցան, *Խօղան* օղլու, որ մինչև իրենց նուաճումը դաշնակցած էին Տաւրոսի հայերուն հետ, *Աօզան* և *հայուկ* ցեղերը, *սարխանտ* օղլու ցեղը, որ իրարու դէմ կռուեցան, և *աֆշարներ*՝ քիւրդ ցեղ մը՝ անոնց չափնշանաւոր իբր կռուող և աւազակ, և այլն և այլն: Թիւրքմէններու այն մասը, որ կ'ձմեռեն Ատանայի դաշտում (*Հուգուր* օվա—*ցած դաշտ*) և ամառը հով կ'ելլեն, *Ծիրորուկ* (գնայուն, թափառիկ) կ'կոչուին և ամենէն աւելի ծանօթ են բոլոր ճանապարհորդներուն:

Այս խառնուրդի մարդահամարը կարելի չէ որոշել, ոչ միայն կանոնաւոր աշխարհագրի մը բացակայութեան շնորհիւ, այլ որովհետեւ եղածներն ալ շատ անճիշտ են: Իսկ հայոց թիւը Գիլիկիայի արդի թէմերուն մէջ՝ *Արա-րատ* ամսագիրը (1895 յունուար էջ 46) նշանակած է 267.150 անձ:

Լեռնցիներու արդի կեանքը, մանաւանդ կէս դար յառաջ, ոչ-քաղաքակիրթ ժողովուրդներու կեանքն է: Անոնց յարաբերութիւններն իրարու հետ զէնքով կ'չափուի: Առևանգումը սովորական բան մ'է ընտանեկան բարքերու մէջ: Տնտեսական վիճակը աւազակային գործունէութենէն կախուած է. իրենց հօտերն ու նախիրները հազիւ կարտադրեն ամենէն անհրաժեշտ պէտքերը: Հողկահարութիւնը ցամաքի վրայ, ծովահենութիւնը ալիքներու վրայ Գիլիկիայի ամենէն հին և ամենէն բնական նկարագիրն

էր: Հին Գիլիկիա իւր ամենէն փայլուն քաղաքակրթութեան ժամանակամիջոցին մէջ ալ չկրցաւ գերծ մնալ աւաղակային կեանքի հոսանքներէն: Այժմ գրեթէ նոյն է թէև տարբեր ձևի մը տակ. արդի գայլաճղներու (մակուկավար), ընդհանրապէս արաբ, վարմունքը ուղևորներուն հետ եղանակաւորուած ծովահինութիւն մ'է. իսկ հուղկահարները դեռ իրենց վերջնական հաշիւը չեն տուած այն լուծին, որուն ներքև դիւրաւ գլուխ չծռեցին:

Առտնին կենցաղը պարզ է և անբաւական, իրենց հագուստն ու կապուստը քաղաքներ կ'պատրաստեն. քիւրդ քէչիկ (հարս, կին) մը չկրնար մկրատ ու ասեղ գործածել. բայց ներա մատները շատ ճկուն են կարպետներու և գորգերու հիւսուածքին մէջ: Իրենց զարդարանքի (գլխաւորապէս արծաթեղէն) պերճանքը Ատանայի և Հալէպի վիլայէթներու գլխաւոր քաղաքներէն կ'գնեն: Այս կերպով շփումը բաւական օգտակար միջոց մ'եղաւ անոնց բարբերն ընտանեցնելու: Լեռնցին միշտ զինուած, ձին թամբուած, քնանալու ժամանակ բարձին ներքնն է իւրատրճանալն կամ հրացանը. ամեն վայրկեան գրեթէ վըրէժինդրութեան խնդիր մը պէտք է լուծուի գիւղէ դիւղ, ցեղէ ցեղ, օպայէ օպա (վրան, վրանախումբ):

Ո՛չ միայն լեռներն են այս բնական վիճակի տեականութեան քաղաքակրթուած դիրքի մը հանդէպ, այլ մանաւանդ կրօնական զանազանութիւններն ալ: Ամեն ցեղ իւր հաւատալիքը, իւր նախապաշարումը, իւր մոլեռանդութիւնն ունի: Ո՛չ մի ձեռնարկ տիրապէս կարող է յաջողիլ քաղաքացիական ճշմարիտ կեան մ'ընդհանրացնելու այս բազմատարր խառնուրդին մէջ:

Օսմանեան տիրապետութիւնը իւր կառավարչական կազմակերպութիւնով չկրցաւ նոր փայլ մը տալ այդ երկրին: Սուլթաններու իշխանութիւնն, որ հազիւ 1840-ին տարածուեցաւ Տաւրոսի բարձունքներու վրայ՝ երբ Լոնտ-

րայի դաշնադրութիւնն ստիպեց Իսլրահիմ փաշան եգիպտական զօրքերն հանել, և վերջապէս 1864-ին, Զեթունի և Խօղան օղլուի նուաճումով, միայն ճնշում և անկում յառաջ բերաւ. այնպէս որ Գիլիկիայի արդի վիճակը ներկայացնելու համար կարելի չէ կէտ մալ փոխել այն տըպաւորութիւններէն, զոր արձանագրեց Վիկտոր Լանկլուա հայագէտն իւր միամնայ հետազօտութիւններու միջոցին 1852—53:

Եգիպտական բանակի պարպուելէն յետոյ, Ատանայի կուսակալութիւնը, որ կազմուած է հին դաշտային Գիլիկիայէն, դարձեալ մտաւ Օսմանեան Դրան իշխանութեան տակ, յանձնուեցաւ իւր գործակալներուն և ենթարկուեցաւ միևնոյն վարչական ձևին, որ կարծես հաստատուած է ցամբեցնելու համար բարեկեցութեան և կեանքի բոլոր աղբիւրները և ջնջելու ամենէն աննշան հետքերն երկրի հին քաղաքակրթութեան».....

Ասիայի այս այն պարտէզն է, զոր կ'ըջապատեն Տաւրոսն ու ծովը և զոր նախնիք Գիլիկիա անունով կ'ճանչէին, որ միջին դարում կորսնցուց ծաղիկներու պաճուճանքը և իւր վեհապանծ տեսքը փոխարկուելու համար պատերազմի դաշտի մը, որուն ստացումը Բիւզանդացիք և հայք իրարմէ ուզեցին խել, Եգիպտացիներ շատ անգամ աւերեցին դայն անգլթօրէն, անխնայ, և որ, վերջապէս, թիւրք տիրապետութեան ներքի ընդարձակ անապատ մեղաւ, ուր ձինկիզխանի և Թիմուրէնկի յաղթական հրոսակներէն սերած թուրքմէն և քուրդ ցեղեր աստ անդ կ'թափառին:

Ենթամիջին դարերի այս երկրին մէջ, այսօր մորենիներով և ժանտահոտ ճահիճներով ծածկուած, տենդը կ'տասանորդէ ժողովուրդ մը, որ ամեն տարի կ'նուազի և որ այդ պատուհասին բռնութեան դէմ կ'դնէ միայն իւր անդարմանելի անհոգութիւնն, և վերջապէս պիտ'

անհետանայ եթէ Եւրոպա չգայ օր մը տնկելու իւր քաղաքակրթիչ գրօշը ծեր Տաւրոսի ձիւնադարդ կատարնե-
րուն և Հին Գիլիկիայի աւերուած դաշտերուն վրայ:

«Տարի մը կեցայ այս երկրին մէջ ուր շնչուած օդը մահառիթ է, ամենէն գեղեցիկ պտուղներ վնասակար են և ջուրերը վատառուղջ. ուր մարդը վերջապէս անյախսի անկում մը կրած է անգլիտանալու և արհամարհելու չափ ան բարեքները, զոր Աստուած հաճած է աւելի իրեն շռայլել քան երկրապնդի ուրիշ ունէ կէտի մը» (Ծմբ. Գիլիկ. էջ 59 և 64—65):

Հայագէտ հետազոտողին դիտողութիւնները հակառուղջական տեսակէտով կ'վերաբերին դաշտային Գիլիկիայի. այդ ժամանակէն ի վեր (գրեթէ կէս դար) փոփոխութիւն մը չէ կրած դէպի լաւ. հակառակը բնական է:

Բ.

*Ռոռքիմեանք եւ Կիլիկիա. — Կիլիկիայի յարաբերու-
թիւնները Բիւզանդիոնի եւ Հռոմի հետ. — Կիլի-
կիայի յողորմականութիւնը. — Հայոց նկնդնցիւն եւ
Ռայոց արդի վիճակը:*

Տաւրոսի պատմական յիշատակները ժԱ դարու կէսէն յետոյ մեղ համար թանկագին են իբր մեր ազգային քաղաքական կեանքի դարաւոր տեսականութիւնը. Ռուբինեան հարստութեան աստիճանաւոր կազմակերպութիւնը իրարմէ անքան տարբեր և զօրաւոր տարրներու մէջ և Գիլիկիայի գրաւումը Մեծն Լևոնի ձեռքով, որ իւր անունով իսկ Լեւոնի ներկը կոշուեցաւ, պատմական անբերկյալներէն է, որ կ'հիւսցնեն և մտածել կուտան. Ռուբէն, հարստութեան տոհմապետը, հեռատես միտք մէր:

և իւր տեղաւորումը Գիլիկիայի մէջ բախտախնդրի ձեռնարկ մը չէր. Գազիկի վրէժը, այսինքն՝ ուրիշ փայլուն հարստութեան մը (Բագրատունի) եղբրական փճացումը հիմն եղաւ Ռուբինեանին: Եւ այս է պատճառն որ Գիլիկիա իբր հայաստան մը, Փոքր կամ Միջին Հայաստան, Այրարատի և Մասիսի հին փառքերուն և հայու լարուած զգացումներուն կենդրոն մ'եղաւ անցելումն և է նոյն իսկ այժմ: Ռուբինեան իշխանութիւնն այնպիսի դազաթնակէտ մ'ունեցաւ, զոր կարելի չէ մեր պատմութեան ուրիշ շրջանի մը մէջ մատնանիշ ընել: Գաղտնիք մ'է այդ որուն բունը կ'կազմեն Տաւրոսեան ամուրներ և ասոնց հանգամանքը կշռող վարչական հանճարներ:

Գիլիկիայի նշանակութիւնը հայ բարքերու և ըմբռնումներու մէջ աւելի շօշափելի է: Ծովեզրեայ երկիր մը ուրիշ արդիւնք չէր կարող ունենալ: Արևելեան հայոց յարաբերութիւններն օտարներու հետ սկզբէն ի վեր իրենց բոլոր տարութեանը մէջ չարտադրեց ինչ որ կ'դիտենք Գիլիկեցիներու վրայ: Եւրոպայի (Իտալիա, Սպանիա) և յետոյ Ժինիվիզներու (Գենուացի), — որք վաճառականական դաշնագրութիւններ ալ կնքեցին հայոց հետ —, չփումը՝ Գիլիկիան Արևմուտքի կապեցին և խաչակրութիւնը ամենէն ընդարձակ միջոց մ'եղաւ Եւրոպայի այդ ժամանակամիջոցն ուսումնասիրելու թէ՛ արքունիքի և թէ՛ ժողովուրդի համար: Պապը, որ կոնդակով մը բանակներ կըրնար հանել այն ժամանակ, հայ Դարպասի բարեկամ դարձաւ. կրօնական նորութիւններ մուտ գտան Ռուբինեանց արքունիքը, Եւրոպան յարգեց, պատուեց այս հարստութեան ներկայացուցիչներն և հայոց եկեղեցին իսկ ստիպուեցաւ նորութիւններ ընդօրինակել արքունիքի խաթեր համար:

Այստեղ կ'սկսի այն ծանրակշիռ խնդիրներուն պատմութիւնը, որք հայոց եկեղեցիին շուրջ դարձան երբեմն

և դեռ կ'դառնան պատմականօրէն:

Միանգամ ընդ միշտ պէտք է համոզուիլ որ Կիլիկեցի հայեր այլ և այլ ցեղերու մէջ պիտ' ապրէին. առնոց հետ ամեն յարաբերութիւն բարեկամական պէտք էր ըլլալ. կեանքի ապահովութիւնը, կենցաղավարութեան պայմանները ուղղակի կ'ապահանջեն այդ ամենը: Առնոց վրայ պէտք է աւելցնել թէ հայ արքունիք մը կար հայ եկեղեցիէն գատ. այս երկու նուիրապետութիւններն սակայն կապուած էին իրարու հետ նոյն իսկ Լուսաւորչէն ի վեր: Լուսաւորչի Աթոռը թաւաւորական իշխանութեանէն շատ պաշտպանութիւն գտաւ. եկեղեցին ալ իւր կողմէն անգործ չկեցաւ ի հարկին: Կիլիկիայի մէջ եկեղեցին աւելի պէտք ունեցաւ իւր պաշտպանութեան, լաւ եւ, իւր օգնութեան շրջանակն ընդլայնելու: Ասի բնական հետեանքն էր Արքունիքի յարաբերութիւններուն անյախի իշխանութիւններու հետ, որք շատ զօրաւոր էին իւր շուրջը և կրօնական կամ եկեղեցական զօրաւոր նախապաշարումներ ունէին. կրօնը, եկեղեցին էր անոնց ոյժին կենդրոնը: Այսպէս Բիւզանդական ձգտումները զբաղեցուցին հայ արքունիքին ու եկեղեցին Ճնորհալիի և իւր յաջորդներուն ժամանակ: Լամբրոնացին, այդ անկեղծ եկեղեցականը, որ զուտ քրիստոնէական ոգիով կամ տեսակէտով յարած փարած էր խնդրին, ջերմ պաշտպան կանգնեցաւ Յունաց հետ միանալու գաղափարին: Ճնորհալին, որ դիտէր հռոմէներու ձգտումները, հայ արքունիքի դիրքն և իւր կողմէն սպասուած օգնութեան չափն ու եղանակը, ամեն զիջողութիւն ըրաւ Բիւզանդիոնի պահանջներուն հանդէպ, որ յաջողութիւն պիտ' ըլլար անշուշտ եթէ իւր մահը չընդհատէր ամեն յարաբերութիւն: Եկեղեցին կ'ընէր այս զիջումները հայոց թագին պահպանութեան համար. և Բիւզանդիոն իբր տիրապետող մը Կիլիկիայի ինչ ինչ կէտերուն այդ յարաբերութիւններու շնորհիւ բարեկամ

մնաց հայոց՝ քաղաքական խնդիրներում:

Բիւզանդիոնի տկարացումը պիտի յայտնէր դադարները. և իրաւի, երբ լատին ազգեցութիւնն սկսաւ զդացուիլ Յիւլիկիայի մէջ՝ հալք միտեցան դէպ ի այդ կողմը. մոռցան Բիւզանդիոնը իւր բոլոր շարժումներով, իւր բոլոր ձկտումներով: Նոր տարրը աւելի զօրաւոր, աւելի փայլուն էր. նոյն իսկ Բիւզանդիոն վնասած էր խաչակիրներու անցքէն: Գրիգոր Տղայ, մեծ կաթողիկոս մը, քռիթիւք վայրկեանի մէջ պաշտօնի անցած էր. թողուց հոռւումները, հետեւեցաւ արքունիքի միտումին. պէտք էր բարեկամանալ պապի հետ, որ ինքն հռովմ նստած՝ բանակներով Յիւլիկիա կ'մտնէր. պապը ահազին ոյժ մէր քաղաքական, բայց կրօնական զսպանակով լարուած: Այդ ոյժը Քրիստոսի անունով Փոքր-Ասիան կ'յեղաշրջէր ջատեկով մալիմական յառաջացումները: Քրիստոնէութեան համար հրաշալի երեւոյթ մ'էր այս: Ամբողջ Փոքր-Ասիա մալիման պիտ' ըլլար եթէ Սալահատտին չհաշտուէր խաչակիր դրօշներու հետ: Հայ արքունիքն՝ քրիստոնեայ ոյժ մը Յիւլիկիայի մէջ՝ ոչ միայն օգնեց այդ խաչակրութեան սովատանջ մէկ ճիւղին, այլ ուղեց իրապէս բարեկամանալ, կապուիլ անոնց և ընդարձակել իւր ոյժը: Այս բարի կամքը բաւական չէր սակայն. խաչակրութիւնը վարող կեդրոնը չպիտի բաւականանար այդ չափով. նա իւր եկեղեցիին ուժով կ'գործէր, իւր նախապաշարումն ունէր և կուգէր որ հայ արքունիքը այդ ճամբով բարեկամանար իրեն հետ: Հայոց կաթողիկոսը չէր կրնար թողուլ հայոց թագաւորը, տեսնել անոր տկարացումը, ստիպողական պէտք մը կ'զգար օգնելու անոր քաղաքական ձեռնարկներու յաջողութեան համար: Ամենայն ազատամտութեամբ կ'զիջանէր: Այս սկզբունքով գործեցին արքունիքն ու եկեղեցին: Եկեղեցին, սակայն, գործեց միշտ խոհեմ, զգոյշ. արքունիքը ազատ էր գրեթէ այդ նրբութիւններէն:

Ահա այն ճշգրիտ ուրուագիծը, որուն վրայ կարելի է շինել հայոց եկեղեցիին յոյն և լատ եկեղեցիներու հետ ունեցած միութենական յարաբերութիւններուն պատմութիւնը, որուն մակարդակային ուսումնասիրութիւնը թիւր և հակապատմական հետեանքներու կ'առաջնորդէ մտքերը:

Բիւզանդիոնի և Հռովմի հետ հայոց ունեցած չլիումներէն շատ քիչ տարութիւն յառաջ եկաւ: Եթէ պատմական տեղիքներու (ղուտ կրօնական գրչէ ելած) վրայ հիմնուենք և ուռուցիկ ասացուածներով շլանանք, պէտք էր սպասել որ ամբողջ Գիլիկեցի քրիստոնեաները կամ յոյն կամ լատին եղած ըլլային այժմ, կամ թէ մասամբ յոյն և մասամբ լատին: Այդ ինչ զօրեղ հոսանք մը և ճիգ՝ նախ Բիւզանդիոնէն և յետոյ Հռովմէն: Իրողութիւնը չը ստեր սակայն. Գիլիկեցի քրիստոնեաներուն ամենէն չընչին մասը կ'կազմեն այսօր այդ եկեղեցիներու հետևողներ: Հիմայ ուրիշ եկեղեցի մը կայ բաւական ստուար հետևողներով: Բողոքական եկեղեցին է այդ, որուն փորձը կարելի է երբորդ նկատել պատմական դասաւորութիւնով Յոյն և Լատին փորձերէն յետոյ: Այսօր յայտնի է, որ բողոքականութիւնը յաջողած է Գիլիկիայում (իմանալով կաթողիկական թէմերու սահմանը) և քիչ շատ տեղական նկարագիր մը կ'կազմէ: Ամերիկա այս յաջողութիւնը չը պարտեր Բիւզանդիոնի կամ Հռովմի ի գործ դրած միջոցներուն. միջոցներ՝ որ յաջողութիւն չտուին այդ միջնադարեան սկզբունքներու գործադրութեան: Բողոքականութիւնը մտաւ Գիլիկիա. իւր յարաբերութիւն ուղղակի ժողովուրդի հետ եղաւ. քաղաքական տեսակէտներ չկային: Յոյներ, խաչակիրներ վանք շինեցին, մեր արքունիքէն կնգուղ առնողներ անգամ եղան. Ամերիկացիներ դպրոց, հիւանդանոց, եկեղեցի շինեցին. օգնեցին նեղ օրերում. հրդեհի, սովի և այլ պատուհասներու դէմ կռուեցան:

Ասոնք շինիչ, հրապուրիչ միջոցներ են սակայն: Բողոքականութեան բուն յաջողութիւնը բանաւոր է աւելի կիլիկեցիներու ընդհանուր կրօնական դիրքին մէջ փնտռել: Կիլիկեցիներ և Կիլիկիայի սահմանակից հայաբնակ տեղեր տեսակ մ'ազատամտութիւն ժառանգել են կարծես. պատմական է այս. յարմարելու, ընտրելու միտում մը, պատրաստականութիւն մը կայ ատոնց մէջ: Կիլիկիայի դաշտային բնակիչներն աւելի խիզախ են այս պարագայում, Տաւրոսի բնակիչները՝ ոչ. բայց անոնք ալ երբ միանգամ փարին նորութեան մը, եթէ ոչ անկարելի՝ գոնէ դժուար կ'լինի ուժացնել զանոնք իրենց ընդգրկած գաղափարէն կամ գոյացուցած համոզումէն: Պէտք է ըսել որ խիստ ընդգիմութեան բաղխեցաւ բողոքականութիւնն իւր մուտքին ժամանակ, այսինքն՝ գրեթէ կէս դար յառաջ. բայց այդ ընդգիմութեան մէջ կարծես միսիօնարներ տեսան ապագայ բեղմնաւորութիւն մը: Կիլիկիայի բողոքականութիւնը լաւ է. մանաւանդ այն օրէն ի վեր, յորում սկսաւ իւր տեսակ մը տգիտութիւնը (վիճելու, արհամարհելու) թոթուել. այսինքն՝ բողոքական նորութիւններու մոյեռանդութիւնը մէկդի թողուլ. սիրել ազգը, հայ ըլլալ, բիշ մ'անդրադառնալ իրենց հին եկեղեցիին վրայ, վերջապէս կամաց կամաց ելլել միսիօնարական ճնշումի տակէն և այլն: Այս երևոյթը գիտելու է բողոքականութեան զարգացած ուրիշ կեդրոններում ալ (Խարբերդ, Մարսւան): Աւելի ուրախալի է տեսնել, որ վերջերս կերպարանափոխութիւն մը կ'կրէ հայ բողոքական եկեղեցիներ Կիլիկիայում Այնթապէն սկսեալ. անոնք մօտենալ կուզեն Հայաստանեայց եկեղեցիին, ընդօրինակելով անոր արարողական և իրենց նպատակայարմար կէտերը:

Հայաստանեայց եկեղեցին ալ տեղական նկարագիր մ'ունի Կիլիկիայի մէջ: Ժողովուրդն որչափ ալ չզարգա-

ցած՝ սակայն կատարեալ յարգանքով և միանգամայն զարմանալի ազատամտութեամբ կ'վարուի իւր եկեղեցիին հետ. խորին քրիստոնեայ մը, բայց ոչ սարսափող եկեղեցիէն: Տաճիկ լեզուն ընդհանրապէս, մանաւանդ զայսին Կիլիկիայում և Տաւրոսի մէկ մասին մէջ կ'տիրէ մեր եկեղեցիներում. քարոզը *միշտ*, ճաշու աւետարանը՝ ընթերցուածներ դրեթէ տաճկերէն պիտ' ըլլան. թարգմանիչ քահանաներ յարգի են: Դրաբարը անմատչելի է նոյն իսկ հայերէնախօս լեռնցիներուն, որոնց առանին խօսուածքն իսկ գիւղէ գիւղ բոլորովին կ'տարբերին:

Այնպիսի պարզութիւններ կան Կիլիկեան եկեղեցիներում, որը կ'հիացնեն. Պոլիս աւելի շատ նորութիւններ ունի քան Կիլիկիան: Բաւական է յիշել Աւագ ուրբաթին թաղումի թափոր կազմելու, շրջեցնելու սովորութիւնը. օտար, բոլորովին հակառակ օրուան յիշատակին բնութեան և նոյն իսկ Տօնացուցին: Այս տգեղ նորութիւնը չունին կիլիկեցիք:

Դիտելու երևոյթ մ'է քահանայութեան դիրքն ալ. ազդեցիկ, գործօն, նոյն իսկ իրենց ամենէն տգէտ վիճակին մէջ: Անոնք կ'խօսին, կ'քարոզեն, ամեն ինչ են եկեղեցիի համար: Քահանայութեան յարգը, զօրացումը Կիլիկիա գիտցած է ճանչել: Զեղծում չպիտի նկատեմ վարդապետներու իրական չգոյութիւնը, որովհետև անձամբ կ'գտնուին, քանի որ քահանաներն են որ կ'վարեն եկեղեցիները: Միայն թէ հասնէր ըստ ինքեան ցանկալի վիճակի մը. քահանայութեան այդ վիճակին բարձրացումը պիտի պայծառացնէ Հայաստանեայց եկեղեցին ամեն տեղ. բայց ամենէն յառաջ նոր զարկ մը պէտք է Կիլիկիայում, ուր դիրք մը կայ արդէն քահանայի համար:

Կիլիկիայի հայեր շատ յառաջ գացին վերջին 20 —
25 տարիներու մէջ. բայց տնտեսական վիճակն, որ ամ-

բողջ Թուրքիան կ'ահաբեկէ, տաճնապեցուցիչ բան մ'ունի Գիլիկիայի համար: Այս երկիրը շատ պանդուխտ չհաներ հացի խնդրին համար, որչափ կ'հանէ Հայաստանը: Երկրին բոլոր զարգացումը, բուն արուեստներ, քրիստոնեաներու, մանաւանդ Հայոց ձեռքն է. վաճառականութեան մէջ, որ Գիլիկիայի համար մեծ նշանակութիւն ունի, նըշանաւոր հայ ձեռքեր կ'գործեն: Տոկնութիւն, զարգանալու յատկութիւն, չափաւորութիւն, խնայողութիւն բարացուցական ընդհանուր գծերն են կիլիկեցիներուն՝ Տաւրոսի բարձունքներէն սկսեալ մինչև Միջերկրականի եզերքը: Այս յատկութիւններն այնքան ազդեցիկ և ցոլուն եղան որ չափաւորեցին նոյն իսկ տաճիկ հասարակութեան բարքերը: Այս երևոյթը դիտելի է մանաւանդ կարևոր և հայաշատ քաղաքներում, ուր անվիճելի կերպով 15—20 տարիներէ ի վեր հայ և տաճիկ հասարակութիւնները հաշտ էին իրարու քաղաքացիական կեանքի պայմաններում, և միայն վերջին ծանօթ դէպքը վերածեց զանոնք իրենց առջի անտանելի բարքերուն. դէպք մը՝ որ նոր էջեր աւելցուց հայոց պատմութեան, մանաւանդ Գիլիկիայի պատմութեան մէջ:

Հայերու կրթասիրութիւնը հաւասար է և աւելի՝ իրենց ջերմեռանդութեան. վեց, երեք եկեղեցի ունեցող քաղաքներ, գիւղաքաղաքներ կան (Ջէյթուն, Մարաշ, Ատանա). այսօր անոնց քով դպրոցներ ալ կառուցուած են: Գրթական ծախքը, ինչպէս եկեղեցականն ալ, իրենք կ'հայթայթեն. դուրսէն օգնութիւններ չեն հասներ. միայն Միացեալ ընկերութիւնն է որ՝ Հաճընի և Ջեթունի կրթական կեանքին հսկեց, բարձրացուց:

Հայերու համար բնիկ է կրթասիրական զգացումը, և Գիլիկիայի մէջ պատմական է այդ. Ռուբինեանց լաւագոյն և ամենէն գերազանց յիշատակներէն մին է անշուշտ գրքի և գրչի սէրը, տաք ձկտումը: Պէտք է սակայն խոստովա-

նեկ որ հայեր (Գիլիկիայի) մրցումի կ'պարտին իրենց վերջին զարկը. միսիօնարներու ձեռնարկները պէտք էր հակաշնչել. այդ քաջութիւնն ունեցան Գիլիկեցիներ և անշուշտ կ'զերազանցէին, եթէ հանգուցեալ Մկրտիչ կաթողիկոսը, որուն վրայ անսպառ համարում մը կենդրոնացուցած էին թէ տեղացիներ և թէ ուրիշներ, մշակէր Գիլիկիայի զարգացումը:

Երկրին ամեն տեսակ պահանջները, թէ կլիմայի ազդեցութեան տակ, թէ այլևայլ ցեղերու հետ շփումով, մըտաւորական մասնաւոր յատկութիւններ տուած են Գիլիկեցիին. սրախօսութիւն, արագ ըմբռնում, հեռատեսութիւն, քաջութիւն, անկախութեան ոգի բարձունքներու վրայ այն յատկութիւններն են, զորս կըթուլեան ձեռքով ներշնչել շատ երկար ժամանակ պիտի գրաւէր. բայց բնական են ասոնք Գիլիկիայի համար. եթէ երկիրը անուն մը պահած է Ռուբինեանց վերջացումէն յետոյ, հայոց կ'պարտի դայն. Ո՛չ մէկ ժողովուրդ կրնայ վերաշինել այդ երկիրը, մանաւանդ տնտեսագիտական տեսակէտով, եթէ ոչ հայեր. տիրող տարրերէն տաճիկը անստակ է միտք յոգնեցնելու. լեռնցիներ բաւական կ'համարին զէնքըն ապրելու համար. Թիւրքմէնը, քիւրտը կ'կողոպտէ, տաճիկը կոշտ արհեստներով և միտք չզբաղեցնող գործերով կ'զբաղի. շատ քիչ է բացառութիւնը:

Գիլիկիայի կրած հարուածն անցեալ տարուան վերջերը՝ դժուար և տնտեսական ամենէն վատ կացութեան մը մատնեց ժողովուրդը, հայր: Գեանք, ինչք, պատիւ անգլթօրէն ըննաբարոյեցաւ: Ինչպէս Հայաստանին ընակիչներն, նոյնպէս Գիլիկիայինը, երկար խաղաղութեան մը և կատարեալ ապահովութեան մը պէտք ունին միայն իրենց կորուսած վիճակը գտնելու համար, որ արդէն գահացուցիչ չէր:

Դիտելու է, սակայն, այս նիւթական անկումի մէջ բարոյական բարձրացումը: Այսպիսի սև ամպեր, որ շատ անցան հայ կեանքի գլխէն, Կիլիկիայի արդի սերունդին համար պատմական զգացում մէր լոկ այդ. այժմ փորձով հասկցան անոնք և զգացին թէ ինչ կ'արժէր իրենց հայուլթիւնը: Իբր հայ քրիստոնեայ զոհեր տալ դեռ այսպիսի դարու մէջ և այդ մսլիման մոլեռանդութեան մը հանդէպ, քստմնելի է. բայց այս վիճակը ներքնապէս զօրացուց հայը. այսօր ազգային կապը կրօնական կամ եկեղեցական ամեն խտիր վերուցած և ի մի ձուլած է հայերը: Բարեբար արդիւնք մը ազգային և զուտ բարոյական ոգիով յառաջ եկած, զոր պէտք է մշակել տեական ընելու համար:

Գ.

*Կիլիկեան կաթողիկոսութիւնը. — Երկու շրջաններ.
Աթոռիս դիրքը. — Արդի վիճակը:*

Կիլիկիայի մէջ հայոց կաթողիկոսութիւնն երկու շրջան ունի. մին Գրիգոր (Բ.) վկայասէրէն կ'սկսի մինչև Գրիգոր (Թ.) Մուսարէկեանց (Ծամնդաւ, Սեաւ լեռ, չուոմ — Կլայի, Սիս. 1085—1440)՝ Ընդհանուր կաթողիկոսութիւն, միւսը Մուսարէկեանցէն մինչև հիմայ՝ Մասնաւոր կաթողիկոսութիւն:

Առաջին շրջանը շատ կարեւոր է մանաւանդ մատենագրական տեսակէտով: Մեր մատենագրութեան Արժաթի դարն իւր փայլը կ'պարտի գրական բեղմնաւոր մշակութեան մը: Այս շրջանի կաթողիկոսներուն մեծագոյն մասը՝ ամենն ալ նշանաւոր անձնաւորութիւններ՝ գրական մշակներու խումբ մը կ'կազմեն (Վկայասէր, Զնորհալի,

Տղայ, Յակոբ Ա. Անաւարդեցի և այլն և այլն): Տաւրոսի և Սեաւ լեռան վանքերուն (Սկևռայ, Ալիներ, Դրազարկ, Զուլըր, Մաշկևոր, Կարմիր վանք և այլն և այլն) հռչակը այդ ժամանակամիջոցում իրական հնչում մունէր, իսկ վարդապետներ (Ստեփանոս Մանուկ, Լամբրոնացի, Սկևռացիներ, և ուրիշ հարիւրաւորներ) կուսակրօնութեան պարծանքն և գրականութեան պատիւն էին: Ժամանակի գիտութիւններուն կեդրոն եղան այն վանքեր, որոնց հետքը հազիւ մնացել է այժմ:

Գահն ու Աթոռը իրարու զօրավիգն եղած ուսումնական կեանքի յարգը բարձրացուցին. չափազանցութիւն չլինիր երբ ըսենք թէ գիրքի և գրչի մշակներու ասպարէզ մէջ Գլխկիան և հայ եկեղեցիի պաշտօնէութեան փառաւոր մի ժամանակամիջոցը՝ կաթողիկոսութեան այս առաջին շրջանը: Իրողութիւն մէջ այս, զոր այդ դարուն մէջ ալ գիտցած են պնահատել. «Գանխեալ վերստին ոտլով ի տեղի իմաստասիրաց եւ ուսումնասիրաց յեր... Գլխկիոյ, որոյ Քրիստոս պահապան կանգնի և պատասխարէ աջովն իւրով» (Սխառան էջ 224):

Ռուբինեան թագաւորներ (Լևոնեանք և Հեթումեանք) և սպարապետներ ալ (Սմբատ Գունդստապլ) գրական անձնաւորութիւններ ունեցան իրենց մէջ, երևոյթ մը զոր կարելի չէ ուղղակի մատնանիշ ընել հայ Արքունիքի նախորդ ժամանակամիջոցներում:

Լեզուագիտութիւնը անվիճելի կերպով ընտիր ներկայացուցիչներ ունեցաւ. Նւրոպայի հետ յարաբերութիւններուն անհրաժեշտ պահանջն էր այդ: Գլխկիայի կաթողիկոսութիւնն աւելի մօտ Բիւզանդիոնի և Նւրոպայի բնականօրէն զարկ տուաւ գրչի գործունէութեան. մրցում կար հայ և ուրիշ վանականներու և եկեղեցականներու մէջ:

Սիւրբ գաղափարուած գրքերու ահագին արտագրութիւն ունեցաւ. անոնցմէ մեզ հասածները հազիւ հարիւ-

րէն մէկն է։ Մենք չենք կրնար ճշտել թէ որչափ հեղինակութիւններ ալ փշաքան անոնց հետ։

Երկու գլխաւոր արուեստ՝ գրչութիւն (ոսկեղն ու նկարեղն ալ միասին) և երաժշտութիւն գերազանցապէս մշակուեցաւ Կիլիկիայի մէջ, հայ մատենադարաններ իրենց ձեռագիր-հարստութեան շատ թանկագին մասը Կիլիկեցի գրիչներու կ'աւարտին։ Ստեփանոս Գոյնեը Նըրցանց պէս գաղափարողներու, Սարգիս ալիժակի պէս ոսկողներու մօտ՝ Կիլիկիան Ալիժներ ալ ունէր իբր ճարտար գրիչներ։ Գրասէր արքունիք, գրասէր հայրապետանոց և հայրապետներ ամեն պաշտպանութիւն ըրին գրական մշակութեան ճեղքերու համայնքին։

Ասոնց յարգը կ'ըագմապատկուի երբ նկատի առնենք այն ժամանակը, որ գրեթէ հանգստութիւն չունէր։ Ներքին խռովութիւններ, արտաքին յարձակումներ անընդհատ էին գրեթէ։ Կեդրոնական տեղեր սակայն, Սիսի վանքէն սկսեալ մինչև Տաւրոսի նշանաւոր վանքերը, բնական ամրութեան մէջ ամուր բռնեցին թուղթն ու գրիչը։

Կիլիկիայի այս շրջանի կաթողիկոսական իշխանութիւնն ընդհանրական էր. գրական և եկեղեցական շարժումներ եռանդուն էին։ Արևելեան վարդապետներ անտրտունջ չմնացին ասոնց հանդէպ. կաթողիկոսներն ահարդելու չափ յառաջ գնացին։ Եւ Արևելքի մէջ Բարսեղ կաթողիկոսի ընտրութիւնը (1082) կաթողիկոսական աթոռներն աստ անդ շատցնելու առիթ տուաւ։ Կիլիկիայի կաթողիկոսարանին դիրքը քաղաքական երկրում՝ նշանակութիւն չունեցաւ արևելեան վարդապետներու համար. այս է պատճառն որ անոնք խիստ և յանդուգն եղան կաթողիկոսներուն առջև։ Այդ խնդիրը մեծցաւ հետզհետէ. ոչ Լևոնի արքունական ընծաներն արևելեան եկեղեցիներու, ոչ կաթողիկոսներուն արևելեանները շահելու տրամադրութիւնը կրցան Տուտէորդիները բերել մտածելու,

գիտելու այն նրբութեան, որով միայն կարելի պիտ' ըլլար Գիլիկիայի կաթողիկոսարանն ըմբռնել:

Դժբաղտաբար Ռուբինեանց տկարացումը հետզհետէ եթէ ոչ կասեցուցին, գէթ սահմանափակեցին բոլորովին Գիլիկիայի գրական յառաջդիմութիւնն և կաթողիկոսարանն անպաշտպան մնացած արտաքին յարձակումներու հանդէպ, բաղմապատկեց արևելեան վարդապետներու տըրտունջը: Գիլիկիան դժուար և շատ դժուար կացութեան մը մատնուեցաւ. այս կողմէն ալ տըտունջներ բարձրացան և հետևանքն եղաւ Գիրակոս Վիրապեցիին ընտրութիւնը (1441):

Մուսաբէկեանց մնաց Գիլիկիայի մէջ. Գիլիկիա, որ իւր փառքի ստուերներուն տակ լքուած էր: Գիլիկիայի համար այստեղ կ'սկսի կաթողիկոսութեան երկրորդ շրջանը. պատմական նշանակութիւն ունեցող շրջան մը:

Էջմիածին և Սիս լաւ աչքով չդիտեցին զիրար երկար ժամանակ. պարբերական կռիւններ բաւական տխուր դէպքերու ծնունդ տուին. ցաւալի է այսպիսի երևոյթներ մանաւանդ մեր պատմութեան մէջ. պէտք չէր որ տեղի ունենային այսպիսի դէպքեր: Ինչ և է, այդ կռիւններ տեսակ մը մրցում եղաւ երկու կողմի համար ալ, գէթ գործունէութիւն պահելու համար երկու կենդրոններուն մէջ. այնպէս որ երբ մին տկարացաւ տիրապետողներու քաղաքական վրդովումներուն մէջ, միւսը զօրացաւ: Այս փոխն ի փոխ վիճակը հետաքրքրական իրողութիւն մ'է:

Հակառակութիւններու, կռիւններու պատմութիւնը չպիտ' ընեմ: Աւելի նշանակութիւն ունի այն հասկացողութիւնն, որ մերթ ընդ մերթ ցուցին երկու կողմէն ալ ի վեր հանելով երկու Աթոռներուն կարեւորութիւնը: Այդ հասկացողութիւնն անվիճելի համոզում մ'եղաւ մանաւանդ քառորդ դարէ ի վեր: Եթէ սկիզբէն փոխանակ հակա-

ռակութիւններով տիրէր անընդհատ բարեկամութիւնը, կշռուէր երկու կեդրոններուն ալ դիրքը մեր ազգային կեանքի տեսակէտով և այլն, այսօր տարբեր վիճակի մը մէջ պիտի տեսնէինք Գիլիկիան:

Գիլիկիայի Աթուոն կարևորութիւնը կ'շեշտուի այն դօրաւոր պատճառներով, որք հետզհետէ իրարու վրայ կ'բարդուին: Ամենէն հակակիր անձեր այսօր տրամաբանական միտում մը կ'ցուցնեն և բարի կամք մը:

Պէտք է խոստովանել որ ունեցանք այդ Աթուոն վրայ այնպիսիներ, որք յուսահատեցուցին, ցամքեցուցին համակրանքի ամենէն յորդ աղբիւրները: Աթուոն դիրքը, պէտքը սակայն միշտ բարձր մնաց անարժաններու գործերուն մէջ ալ: Պէտք է խոստովանել դարձեալ որ շատերու կողմէն կոյր հակակրութեան մը, լաւ ևս, կոյր հետևակութեան մ'արդիւնքն էր հակառակել երկրի մը կեդրոնին դէմ, որ նշանակութիւն մ'ունի պատմական և միշտ պիտ' ունենայ....

Այդ երկրին կարևորութիւնն ըմբռնելու համար մէջը մտնել պէտք է: Հայը շրջապատող տարրերը, հայ ժողովուրդին մտաւորական և տնտեսական վիճակը, միտումները դէպ ի ուսումը, դէպ ի ազգը, դէպ ի եկեղեցին, քաղաքէ քաղաք, գիւղէ գիւղ տիրող բարքերու զանազանութիւնը, լեզուն, անոր ցրուածութիւնը Գիլիկեան հողի վրայ, այս, այս ամենը, թող տարօրինակ չերևի, ուսումնասիրել, շատ մօտէն գիտնալ միակ պայմանն է Գիլիկիայի կեդրոնին դիրքը գնահատելու համար:

Ո՛չ էջմիաժին, ո՛չ Գ. Պոլիս կրնայ կառավարել Գիլիկիան և այս շատ յայտնի և շատ դօրաւոր պատճառներով: Երոնց մի բանին արդէն բացատրեցի անցեալ տարի Արեւելք օրագրի (1895 Յունուար 4) ընթերցողներուն: Այստեղ կ'շեշտեմ միայն Գիլիկիային տեղագրական դիրքը, ամենէն բնական պատճառը: Գիլիկիա իր

մէջ պէտք է կառավարուի. Տաւրոսի բարձունքներովրայ
և ծմալներու մէջ անկարելի է լսեցնել ան ձայնը, սը
էջմիածինէն կամ Կ. Պոլսէն կուգայ: Բայց էջմիածին,
Սիս, Կ. Պոլիս պէտք է միանան իրապէս և ո՛չ պաշ-
տօնապէս. պէտք է ճանչեն իրարու դիրքն ու պէտքը և
այս ամենէն խիստ պայմաններու մէջ. ճշմարիտ համե-
րաշխութիւնն այս է, զոր իրականացնելու համար բա-
ւական է որ գահակալներ միայն և ուղղակի ժողովուրդը
գիտեն: Այս ըմբռնումն ունեցողներ, քաղաքագէտ գլուխ-
ներ չպակսեցան թէ էջմիածնի և Սիսի կաթողիկոսնե-
րու և թէ Կ. Պոլսի պատրիարքներու շարքում, Ասոնցմէ,
իբր վերջիններէն, կ'նշանակենք Աշտարակեցիէն մինչև հի-
մայ Մայր Աթոռի կաթողիկոսները, բաց ի Գէորգ Դ. էն,
և Կիլիկիայէն մեծն Կիրակոսը (Ա.). ասոնք շատ անկեղ-
ծօրէն և շատ լաւ հասկացողութեամբ գիտեցին զիրար՝ և
գործեցին: Իսկ պատրիարքութիւնը բոլորովին Կիլիկեան
սէր մ'ունէր սկիզբէն ի վեր, իբր երբեմնի թէմը Կիլի-
կիային. այնպէս որ Կիլիկիայի կաթողիկոսներէն պատ-
րիարք և պատրիարքներէն Կիլիկիայի կաթողիկոսներ ե-
ղան: Եւ ժողովուրդի հասկացող դասու գաղափարին
իբր կեդրոն կ'շեշտեմ Օտեանի և Օտեաններու համոզումը:
— Վերջին հակակրութիւնները պատրիարքարանի և Կիլի-
կիայի մէջ Գէորգ Դ. ին հետ ուղղակի արդիւնքն է հան-
գուցեալ Նիկողոս (Կիրակոս Գ.) և Մկրտիչ կաթողիկոս-
ներու սխալ քայլերուն և Գէորգ Դ. ի տարապարտ ձըկ-
տումներուն:

Կիլիկիայի կաթողիկոսութեան դիրքը ամենէն յա-
ռաջ Կիլիկեան եկեղեցականութիւնը պէտք էր հասկնար և
այս ոչ թէ կուրօրէն յամառումով: Դժբաղտաբար չկայ
այդ հասկացողութիւնը. եպիսկոպոսներ, բաց ի քանի մը
բացառութենէ, միայն կոյր փառասիրութիւն մ'ունին և
ոչ ուրիշ բան. ասոնք դասալիքներ են Նրուսաղէմէն և Ա-

Թողը կ'ճանչեն անշափ հրչափ կարելի էր սողոսկել եպիսկոպոսանալու համար: Այս խորին տգիտութիւնն է որ նոր կնճիռներ յառաջ կ'բերէ. ցաւալի իրողութիւն մը....

Յիւլիկիայի կաթողիկոսութեան երկրորդ շրջանը չունեցաւ Առաջինին գրական փայլը: Քաղաքական անկումի և յաջորդող անհանգիստ ժամանակներուն ընական հետեանքն էր այս. թէև նշանաւոր դէմքեր չպակեցան կաթողիկոսներու շարքին մէջ (—ինչպէս Կարապետ կ'թղ. Նոյն իսկ Վիրապեցիէն եպիսկոպոսացած, որ Մուսարէկեանէն յետոյ առաջին կանգնողն եղաւ Աթոռին, իւր յաջորդն Ստեփանոս, հանրածանօթ Թլկուբանցին (Յովհաննէս Ա.), Կայծակը (Յովհաննէս Գ.), Աղարիա, Տիրատուր (գլխնական), Բարեբարոյ (Յովհաննէս Գ. Այնթապցի՝ պատմագիր): Սիմէոն և Ներսէս Սեբաստացիներ, Դրիգոր (ուլուրլու), Աջպահաններէն Եփրեմ (պատմագիր Աջպահանց), Վիրակոս Ա. կաթողիկոսներ —), բայց անկարող էին ասոնք խռոված ժամանակի մը մէջ գործել: Գերութեան, բանտի մէջ մաշած թունաւորուած և նահատակուած անձնաւորութիւններ կան ասոնց մէջ. իրենց բոլոր ոյժը Սիսի՝ կենդրոնական վանքին պահպանութեան նուիրած էին: Այս դժբաղտութիւններու հետեանքով ուրիշ վանքեր ալ փակեցին իրենց դռները գիտութեան հանդէպ. Աւերակը պիտի տիրէր գիրքի գրչի տեղ. տրգիտութիւնն ընդհանուր խեղճութիւն մ'եղաւ. այսօր բան մը չունինք անցեալի փառքերէն, միայն պատմութիւնն անոնց և զգացում մը որ խաղաղ միջավայր կ'ուղէ բարդաւաճելու համար: Գէթ երեք դար յառաջ Յիւլիկեցի կաթողիկոսներ դեռ նախորդ շրջանի իրական արդիւնքով կ'պանծային, «Սաղմոսն ի Մշայ եւ խազն ի Սսայ» առածով, որ ամբողջ խտացումն է Յիւլիկիայի երաժշտական յառաջդիմութիւններուն: Մենք ցաւ մ'ունինք այժմ, ոչ միայն անոնց ստուերն ալ չունինք, այլ մանաւանդ

չունեցանք դեռ այդ բանը հասկացող մը: Թող Սեաւ լեռան վանքերը, Թող ուրիշ ամեն բան, Սիան անգամ, որու պահպանութեան հին կաթողիկոսներ արին թափեցին, չէ պահած նշոյլ մ'ալ հին պարծանքէն: Ո՛չ Մատենադարան, ոչ ձեռագիր, որ «Մսու» անունով հռչակուած էին, ոչ շէնք, ոչ Դիւան, ոչ զրիչ, ոչ երաժիշտ և այլն, իրական ամայութիւն մը: Ամայութիւն մը, որուն տակ ժողովուրդի յոյս մը կայ ծածկուած:

Մարդ հրճուանքով կ'դիտէ սակայն յառաջդիմական դարթնում մը ժողովուրդի մէջ 20 — 25 տարիներէ ի վեր յուսալից և արդէն արդիւնաւոր է այս յառաջդիմութիւնը: Հայերէն լեզուն, որ մասնաւոր կաղապար մաւած է Կիլիկեցիներու բերնին մէջ, վայրագ ստիպումներու ներքի սկսած էին չգործածել ժամանակ մը և այդ ժամանակը դեռ պառաններ կ'յիշեն յորում Կիլիկեցիներու լեզուները ծայրատուած են՝ մանաւանդ դաշտային Կիլիկիայի մէջ խափանելու համար հայերէնախօսութիւնը: Այս է պատճառն որ Կիլիկիա տաճկախօս երկիր մ'է եղած: Բայց այսօր երիտասարդութիւն մը կ'բողբոջի այնտեղ՝ կրթուած, հայ լեզուով՝ և սրտով: Այս դարթնումի հանդէպ սէտք էր մրցել եկեղեցականութիւնը: Հատ փայլուն շրջան մը պիտ' ըլլար այդ և աւելի կարեւոր քան Արծաթի դարը, ամբողջ ժողովուրդը պիտի լուսաւորուէր:

Զարմանալի թող չլինի: Կիլիկիայի մէջ կաթողիկոսութեան աջակցութիւնը կրթական գործին՝ անհրաժեշտ է: այնտեղ կաթողիկոսներ այս երկար շրջանում բոլոր Տաւրոսն ոտքի հանելու չափ հեղինակութիւն մը չինած էին: Աջպահան վերջին կաթողիկոսներու պատմութիւնը ծանօթ է, և դեռ գրեթէ կ'տիրէ այդ հեղինակութեան կախարդանքը: Զնորհարով կաթողիկոս մը հրաշք պիտի գործէ գլուխ կանգնելով ժողովրդական բարձրացումի: Նախորդներ թիւրքմէն գլխաւորներու հետ դաշնակցած

անկախ պահեցին Տաւրոսը: — Մկրտիչը մեռցուց Կիլիկիան
և իւր ընտանիքը՝ եպիսկոպոս ըստած արարածներ
կհոտեցնեն. բայց Կիլիկեցիները չպիտի ներեն ալ. չպիտի
ներեն ալ որ տղէտ, փառասէր, ինքնակոչ եկեղեցական-
ներ իրենց՝ Կիլիկեցիներուն՝ հետ խաղ խաղան. — նորեր
կրթութեան հերոսներ պէտք է ըլլան: Մենք ասոր կը
սպասենք:

Կիլիկիայի կաթողիկոսութեան թէմերուն սահմանը
սեղմուած է հիմայ, (յառաջ մինչև Կ. Պօլիս, երուսաղէմ
Կիպրոս կ'տարածուէր. Առաջին շրջանի կաթողիկոսու-
թիւնը 5 հաստատուն արքեպիսկոպոսական կեդրոններ և
18 — 20 եպիսկոպոսարաններ՝ Առաջնորդութիւն՝ կ'հաշուէր.
այդ թիւերը շատ չփոխուեցան գրեթէ մինչև երկրորդ
շրջանին վերջերը. այժմ հազիւ 9 կամ 10 Առաջնորդու-
թիւն ունի, որք Ատանայի և Հալէպի վիլայէթներում տա-
րածուած են. այսինքն՝ Ատանայի վիլայէթը ամբողջ, Հալէ-
պէն՝ բուն Հալէպ (Բերիա), Այնթապ և Անտիոք իրենց
շրջականերով Կիլիկիայի արդի թէմական սահմանը կը
կազմեն). լայն ասպարէզ մը կայ սակայն գործելու այդ
սեղմ սահմանի մէջ և բեղմնաւոր ասպարէզ մը:

Կաթողիկոսութիւնը Կիլիկիայի մէջ այնչափ կարեւոր
է որչափ անոր՝ Կիլիկիայի ազգային նշանակութիւնը:
Մեր ազգին համար Կիլիկիա միշտ իրական կեդրոն մ'է
իւր համայնքով, պէտք է զարգացնել:

Աթոռներու համերաշխութիւնը, իրական օժանդա-
կութիւնը և մէն մի հայու համակրանքը ամենէն ընտիր
միջոց մ'է բարձրացնելու համար երկիր մը, ուր այժմ
ամենէն յառաջ հայ ժողովուրդը մը կայ և այդ ժողովուրդ-
ը պէտքեր ունի....

ԲԱԿ